ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՐԱՄԱՆ

24 Մայիսի 2012թ. № 153-Ա

ՎՃԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 16-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի 6.2-րդ, 16-րդ և 17.1-րդ կետերը, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 6.2-րդ, 15-րդ և 16.1-րդ կետերը, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածը և N 1 հավելվածի 4-րդ և 20-րդ կետերը, «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար դիմումի ձևը (**Ձև N ՀՎ1**), վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին եզրակացության ձևը (**Ձև N ՀՎ2**) և վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց կատարված հաշվանցումների և (կամ) վերադարձների մասին ամփոփ տեղեկանքի ձևը (**Ձև N ՀՎ3**)՝ համաձայն հավելվածի:

2. Անուղղակի հարկերի (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ) գծով գերավճարից տարբերվող գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դեպքերում կիրառվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի «Ավելացված արժեքի

հարկի հաշվարկի և ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևերը, դրանց լրացման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 14-ի N 1423-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2034-Ն հրամանով հաստատված «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի» դիմումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 4-ի «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ» հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի N 02/1291 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1417-Ն հրամանով հաստատված «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ» հրահանգի «Արտահանված՝ ակցիզային հարկով հարկված ապրանքների դիմաց վճարված ակցիզային հարկի գումարների վերադարձման» դիմումը (Ձև N2):

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայասնատանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2007 թվականի դեկտեմբերի 17-ի «Հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների հաշվանցման կամ վերադարձման համար նախատեսված եզրակացությունների և ամփոփ տեղեկանքների ձևերը հաստատելու մասին» N 16-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հոկտեմբերի 1-ից և տարածվում է 2012 թվականի հոկտեմբերի 1-ից հետո առաջացող գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին առանց վճարողի դիմումի կատարվող հաշվանցումներին, ինչպես նաև վճարողների կողմից 2012 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ներկայացված դիմումներով գերավճարների և գերավճարներից տարբերվող գումարների հաշվին կատարվող հաշվանցումներին և (կամ) վերադարձներին:

Նախագահ՝ **Գ. Խաչատրյան**

Համաձայնեցված է **Հայաստանի Հանրապետության** **ֆինանսների նախարարության** **հետ** **«11» հունիսի 2012թ.** **N 1313-Ա**	**Հավելված** **ՀՀ կառավարությանն առընթեր** **պետական եկամուտների** **կոմիտեի նախագահի** **«24» մայիսի 2012թ.** **N 153-Ն հրամանի**

ՎՃԱՐՈՂԻ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐ

1. Դիմում՝ վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար **(Ձև N ՀՎ1)**:

2. Եզրակացություն՝ վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին **(Ձև N ՀՎ2)**:

3. Ամփոփ տեղեկանք վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց կատարված հաշվանցումների և (կամ) վերադարձների մասին **(Ձև N ՀՎ3)**:

ՁԵՎ N ՀՎ1

_____
(տարածքային) հարկային տեսչություն

ԴԻՄՈՒՄ

Վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձի համար

											ՀՎՀՀ
(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)											
ԱԱՀ վճարողի հաշվառման համարը											

1. Խնդրում եմ կատարել դրամով նշված գումարների հաշվանցում անձնական հաշվի քարտերից հետևյալ անձնական հաշվի քարտեր՝

Անձնական հաշվի քարտի տեսակը, որից կատարվելու է հաշվանցումը	Անձնական հաշվի քարտից հաշվանցման ենթակա գումարը (դրամ)	Անձնական հաշվի քարտի տեսակը, որին կատարվելու է հաշվանցումը	Անձնական հաշվի քարտին հաշվանցման ենթական գումարը (դրամ)
Ընդամենը		**Ընդամենը**	

2. Խնդրում եմ գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի մնացորդից վերադարձնել դրամով նշված գումարները՝

Անձնական հաշվի քարտի տեսակը, որից կատարվելու է վերադարձը	Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Անձնական հաշվի քարտից վերադարձման ենթակա գումարը (դրամ)
		Ընդամենը	

Դիմումի ներկայացման ամսաթիվը ____ _____ 20___թ.

Տնօրեն կամ անհատ ձեռնարկատեր (անունը, ազգանունը և ստորագրությունը)

Հարկ վճարողի կնիքը՝

Հաշվապահ (անունը, ազգանունը և ստորագրությունը)

ՁԵ N ՀՎ2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _____

Վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին

											ՀՎՀՀ
(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)											
ԱԱՀ վճարողի հաշվառման համարը											

Վճարողի ___ _____ 20___թ. ներկայացված դիմումի համաձայն՝

1. ինչպես նաև առանց վճարողի դիմումի, կամերալ ուսումնասիրությամբ (կամ առանց ուսումնասիրության) վճարողի անձնական հաշվի քարտերից հետևյալ անձնական հաշվի քարտեր կատարվող հաշվանցումներ՝

Անձնական հաշվի քարտի տեսակը, որից պետք է կատարվի հաշվանցումը	Պետական բյուջեի հաշվի համարը, որից պետք է կատարվի փոխանցումը	Անձնական հաշվի քարտի տեսակը, որին պետք է կատարվի հաշվանցումը	Պետական բյուջեի հաշվի համարը, որին պետք է կատարվի փոխանցումը	Հաշվանցման ամսաթիվը	Անձնական հաշվի քարտին հաշվանցման ենթական գումարը (դրամ)
				Ընդամենը	

2. վճարողի գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի մնացորդից ենթակա է վերադարձման (հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորությունները մարված են)՝

Անձնական հաշվի քարտի տեսակը, որից պետք է կատարվի վերադարձը	Պետական բյուջեի հաշվի համարը, որից կատարվում է վերադարձ	Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Անձնական հաշվի քարտից վերադարձման ենթակա գումարը (դրամ)
			Ընդամենը	

Վճարողին վերադարձման ենթակա գումարն արձանագրվել է առանց ուսումնասիրության, կամերալ ուսումնասիրությամբ, հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրությամբ, պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության կամ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ստուգմամբ՝ իրականացված _____ _____ 20__թ. N _____ հանձնարարագրով (անհրաժեշտն ընդգծել և լրացնել):

Եզրակացության կազմման ամսաթիվը ____ _____ 20___թ.

(Տարածքային) հարկային տեսչություն _____
(անվանումը)

(Տարածքային) հարկային տեսչության պետ _____

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ N _____

Վճարողի գերավճարների (այդ թվում՝ անուղղակի հարկերի) կամ գերավճարից տարբերվող գումարների (բացառությամբ՝ անուղղակի հարկերի) հաշվին նրա այլ պարտավորությունների դիմաց կատարված հաշվանցումների և (կամ) վերադարձների մասին

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ամփոփելով 20__թ._____-ի_____-ից մինչև 20__թ._____-ի _____-ը հարկային մարմիններից ստացված եզրակացությունները, տեղեկացնում է, որ պետական բյուջեի հետևյալ հաշիվներից ստորև նշված գումարները ենթակա են հաշվանցման պետական բյուջեի հետևյալ հաշիվներին.

Հ/Հ	Պետական բյուջեի հաշիվը, որից հաշվանցվում է	Պետական բյուջեի հաշիվը, որին հաշվանցվում է	Գումարը (դրամ)
		Ընդամենը	

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ամփոփելով 20__թ._____-ի_____-ից մինչև 20__թ._____-ի_____-ը հարկային մարմիններից ստացված եզրակացությունները, տեղեկացնում է, որ պետական բյուջեի հետևյալ հաշիվներից ստորև նշված գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողների հետևյալ հաշվարկային հաշիվներին.

Հ/Հ	Պետական բյուջեի հաշիվը, որից կատարվում է վերադարձ	Բանկը, որին պետք է փոխանցել գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցելգումարը	Գումարը (դրամ)
			Ընդամենը	

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի նախագահ

_____ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

_____ _____20__թ. Կ.Տ.


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
КОМИТЕТ ГОСУДАРСТВЕННЫХ ДОХОДОВ ПРИ ПРАВИТЕЛЬСТВЕ РА
STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF RA

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA